ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները նախագծով 2019 թվականի համար ծրագրվել են 35,286,631.5 հազ. դրամ՝ 2018 թվականի ճշտված 38,033,547.5 հազ. դրամի և 2017 թվականի 30,142,487.3 հազ. դրամի դիմաց կամ համապատասխանաբար 2,746,916.0 հազ. դրամով պակաս և 5,144,144.2 հազ. դրամով ավել՝ հիմք ընդունելով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները (ցանկը կցվում է):

- տեղական վճարների գծով ծրագրվել է 5,685,274.4 հազ. դրամ՝ 2018 թվականից 5,296,142.8 հազ. դրամի համեմատ, ինչն ավելի է նաև 2017 թվականի փաստացի հավաքագրման ցուցանիշից 2,618,719.4 հազ. դրամով կամ 85.4%-ով: Տեղական վճարների գծով նախատեսված ցուցանիշը ներառում է Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքում աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճարի դրույքաչափերը սահմանելու մասին» N 347-Ն որոշմամբ սահմանված և 2012 թվականից կիրառվող աղբահանության վճարը, որը ծրագրվել է 3,475,037.9 հազ. դրամի չափով, ինչպես նաև համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը՝ 137,701.7 հազ. դրամ: Համայնքի կողմից մրցույթների և աճուրդների կազմակերպման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարների գծով ծրագրվել է 2,000.0 հազ. դրամի, իսկ հասցեի տրամադրման համար 115,000.0 հազ. դրամի մուտքեր: Միաժամանակ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո արդեն իսկ տեղական վճար համարվող ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայատեղում կայանելու համար ծրագրվել է 1,210,000.0 հազ. դրամ, համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար նախատեսվել է՝ 43,200.0 հազ. դրամ, համայնքային

ենթակայության արտադարձական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ 650,321.5 հազ. դրամ, համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ 3,013.3 հազ. դրամ, համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային սեփականության թանգարանների մուտքի համար՝ 15,000.0 հազ. դրամ, համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ 3,000.0 հազ. դրամ, համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ 22,000.0 հազ. դրամ, անասնաբույժի ծառայության դիմաց վճարի համար՝ 9,000.0 հազ. դրամ:

- ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարների գծով ծրագրվել է 60,000.0 հազ. դրամ՝ 2018 թվականին ծրագրված ցուցանիշից պակաս 180,000.0 հազ. դրամի չափով,
- վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների գծով նախատեսվել է 500,178.4 հազ. դրամ, որից 250,000.0 հազ. դրամը՝ ավտոկայանատեղի վճարի չվճարման սահմանված դեպքերում նախատեսվող պատասխանատվության միջոցների կիրառումից,
- նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքերի՝ տրամադրված արտաքին աղբյուրներից եկամտի գծով ծրագրվել է 12,000.0 հազ. դրամ՝ 2018 թվականին ծրագրված ցուցանիշից ավել 2,000.0 հազ. դրամի չափով,

- օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով ծրագրվել է 721,070.5 հազ. դրամ՝ 2018 թվականի բյուջեով նախատեսված 313,377.7 հազ. դրամի դիմաց,
- վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերը 2019 թվականին ծրագրվել են 2,545,882.0 հազ. դրամի չափով՝ բյուջեի եկամտային և ծախսային մասերի հավասարակշռման նպատակով:

2. Ծախսերի կանխատեսում.

Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 84,346,812.0 հազ. դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի շուրջ 96%-ը կամ 81,066,255.1 հազ. դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), 5,803,938.9 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին (ֆոնդային բյուջե), իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով մուտքերի և ելքերի գումարը կազմում է 3,370,000.0 հազ. դրամ: Նախագծի ծախսային մասը ավել է 2018 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ծախսային մասից 4,078,842.2 հազ. դրամով: Ավելացված ծախսերի բացատրությունն ըստ ծրագրերի ներկայացվում է ստորև: Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալներում սոցիալական բնագավառի (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն) ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 37.9%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերինը՝ 15.7%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերինը՝ 11.7%:

Նախագծով նախատեսվել է պահուստային ֆոնդ 9,410,644.7 հազ. դրամի չափով, (վարչական եկամուտների 11.6 %-ը): Վարչական մասի պահուստային ֆոնդից 2,523,382.0 հազ. դրամը նախագծով նախատեսվում է հատկացնել ֆոնդային մաս, 6,550,945.9 հազ. դրամը՝ հիմք ընդունելով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշը, որպես պատվիրակված լիազորություն Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային երկրորդ ծրագրին:

Նշված ծրագիրը նախատեսվել է պահուստային ֆոնդից հատկացման ձևով, քանի որ այն ծախսային մասով ներառելու դեպքում չէր ապահովվի «Բյուջետային

համակարգի մասին» ՀՀ օրենքով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով պահուստային ֆոնդի համար նախատեսված նվազագույն 5%-անոց շեմը: Նման օրենսդրական շեմն ըստ էության խնդիր է առաջացնում համայնքներից միայն Երևան համայնքում, հաշվի առնելով եկամուտների կազմում պատվիրակված լիազորությունների իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը:

Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի նախագծով ծրագրվող ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները՝ ըստ ծրագրերի.

1. **Կառավարման մարմնի պահպանում** ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության (ներառյալ փոփոխությունները) պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի (այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող միակ բյուջետային հիմնարկի՝ «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի) կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին (ներառյալ վարչական շրջաններին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները: Այս ծրագրով նախագծում ծախսեր են նախատեսվել 9,112,386.1 հազ. դրամ կամ ընդհանուր ծախսերի շուրջ 10.8%-ը, ինչը 2018 թվականի ճշտված համապատասխան ցուցանիշից ավել է 989,485.6 հազ. դրամով: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում էական տեսակարար կշիռ է կազմում աշխատավարձի ֆոնդը՝ 5,213,185.9 հազ. դրամ: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը իրականացվել է Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N 10-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի հիման վրա: Հաստատված հաստիքացուցակով նախատեսված 1998 հաստիքից նշված ծախսային հոդվածին բաժին է ընկնում թվով 1783 հաստիքներ (առանց պատվիրակված լիազորությունների համար նախատեսված հաստիքների), որից միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակը կազմում է 1738: Աշխատավարձի ֆոնդը ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2018 թվականին ծրագրվել է 13 ամսվա աշխատավարձի չափով, որը նախատեսված է արձակուրդայինների և վերջնահաշվարկների վճարման համար: Նույն սկզբունքով հաշվարկված և նախատեսված հաստիքներում աշխատող անձանց խրախուսման

համար, աշխատավարձի ֆոնդի 38.2%-ի չափով նախատեսվել է պարգևատրման ֆոնդ: Էներգետիկ ծառայությունները ներառում են էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը, որոնք հաշվարկվել են հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի և 2018 թվականին սպասվող ծախսերի ծավալների միջին ցուցանիշները, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N422-Ն, 2016 թվականի նոյեմբերի 25-ի N333-Ն և 2017 թվականի նոյեմբերի 22-ի N499-Ն որոշումների պահանջները: Մասնավորապես, այս հոդվածով 2018 թվականին նախատեսվել է 266,414.3 հազ. դրամ՝ 2018 թվականի 270,678.5 հազ. դրամի դիմաց կամ 4,264.2 հազար դրամով պակաս: Կոմունալ ծառայությունները ներառում են ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև վարչական շենքերի միջատազերծման հետ կապված ծախսերը և ծրագրվել են 18,450.4 հազ. դրամի չափով՝ 2018 թվականի բյուջեով նախատեսված ցուցանիշից 240.6 հազ. դրամով ավելի: Կապի ծառայությունները ներառում են փոստային ծառայությունները, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և օպտիկական կապուղու ծառայությունները: Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այս հոդվածը ներառող բոլոր ծառայությունների համար ընդհանուր նախատեսվել է 184,981.8 հազ. դրամ, ինչը պակաս է 2018 թվականի ցուցանիշից 13,731.7 հազ. դրամով: Ապահովագրական ծախսերը նախատեսվել են 4,935.5 հազ. դրամի չափով՝ հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջները, սահմանված գները և Երևանի քաղաքապետարանում հաշվառված մեքենաների քանակը: Ծրագրված գումարը պակաս է 2018 թվականին նախատեսված ցուցանիշից 376.0 հազ. դրամով: Գույքի և սարքավորումների վարձակալությունը ծրագրվել է 45,965.0 հազ. դրամ՝ 2018 թվականին նախատեսված ցուցանիշից 30,240.0 հազ. դրամով պակաս, որը ներառում է քաղաքապետարանի որոշ ծառայողական մեքենաների վարձակալությունը, որն իր հերթին ներառում է նաև դրանց ընթացիկ նորոգումը, վառելիքի ծախսը, վարորդի տրամադրումը և այլն: Արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը պլանավորվել են՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 235-

Ն որոշմամբ սահմանված նորմերը, նախորդ տարիների փաստացի, 2019 թվականին ծրագրված քանակական ցուցանիշները և ծրագրվել է 112,750.0 հազ. դրամ՝ 2018 թվականի ցուցանիշից 50,000.0 հազ. դրամով ավել: Այս հոդվածով նախատեսված ծախսերը վերաբերում են Երևանի քաղաքապետարանի՝ ներառյալ Երևան քաղաքի ավագանու անդամների, կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի գործուղումներին: Վարչական ծառայությունների գծով նախատեսվել է 12,489.9 հազ. դրամ՝ քաղաքապետարանի և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակազմերում փաստաթղթերի կարման և կազմման, ինչպես նաև թարգմանչական ծառայությունների համար՝ 2018 թվականի ճշտված 3,829.9 հազ. դրամի դիմաց: Համակարգչային ծառայությունների գծով ծրագրվել է 45,907.0 հազ. դրամ՝ քաղաքապետարանի գույքահարկի, հողի հարկի, տեղական տուրքերի, աղբահանության վճարների և հողի վարձակալության հաշվառման (բազայի), վճարումների ընդունման առցանց համակարգի և գանձապետական համակարգչային առկա ծրագրերի, վարչական շրջանների ՀԾ համակարգի սպասարկման համար: Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների համար նախատեսվել է 169,172.0 հազ. դրամ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացն ապահովելու նպատակով, 2018 թվականի նույն ցուցանիշից 159,910.0 հազ. դրամով ավել: Ավելացումը միտված է միջազգային փորձի ուսումնասիրության համար աշխատակիցների արտասահմանյան վերապատրաստման ծրագրերին ակտիվորենի մասնակցելու գործընթացի խթանմանը: Տեղեկատվական ծառայությունների գծով ծախսերը նախատեսվել են 19,722.4 հազ. դրամի չափով՝ 2018 թվականին հաստատված ցուցանիշից 20,634.4 հազ. դրամով պակաս՝ պաշտոնական և գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրերի, բրոշյուրների տպագրության, թերթերի և ամսագրերի, տպագրական աշխատանքների (ներառյալ բլանկների) իրականացման, լրատվական և գովազդային ծառայությունների ձեռքբերման համար: Կառավարչական ծառայությունների գծով ծախսերը նախատեսվել են 5,000.0 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված ցուցանիշից 5,000.0 հազ. դրամով պակաս և ներառում են աուդիտորական մասնագիտացված կազմակերպությունների ծառայությունները, մասնավորապես «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 4-րդ մասին

համապատասխան Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի կատարման հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու համար: Ներկայացուցչական ծախսերի գծով ծրագրվել է 61,732.0 հազ. դրամ, ինչն պակաս է 2018 թվականի հաստատված (ճշտված) ցուցանիշից 118,431.9 հազ. դրամով: Գումարը նախատեսվել է պաշտոնական պատվիրակությունների ընդունելությունների և արարողակարգային բնույթի միջոցառումների հետ կապված ծախսերի, ինչպես նաև աշխատակազմերում առօրյա ներկայացուցչական ծախսերն իրականացնելու համար: Ընդհանուր բնույթի այլ ծառայությունները ծրագրվել են 46,633.8 հազ. դրամի չափով, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերի պահպանության ծառայությունը, գույքի վերազնահատման, ակտիվների շրջանառման, վերահսկման և կառավարման ծրագրային ապահովման, ինչպես նաև քաղաքապետարանի աշխատակազմի և վարչական շրջանների աշխատակազմերի գործառույթներով պայմանավորված օպերատիվ հաղորդակցության ապահովման համար անհրաժեշտ ծառայությունները: Մասնագիտական ծառայությունների գծով նախատեսվել է 10,428.0 հազ. դրամի չափով ծախս՝ հիմնականում փաստաթղթերի արխիվացման համար, ինչպես նաև գազի և ավտոմատ հեռախոսակայանի սպասարկման, հնոցապահի ծառայության համար և ծրագրվել է 2018 թվականի ճշտված բյուջեից 723.1 հազ. դրամով պակաս: Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով ծրագրվել է 235,548.6 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 42,563.0 հազ. դրամով պակաս, որը ներառում է քաղաքապետարանի և վարչական շրջանների ավտոմեքենաների, գույքի, համակարգչային տեխնիկայի և այլ սարքավորումների ընթացիկ նորոգումը և պահպանումը: Հաշվարկների հիմքում դրվել են 2018 թվականի գնման գործընթացի արդյունքում ձևավորված գները և քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված և փաստացի շահագործվող գույքի քանակական ցուցանիշները: Գրասենյակային նյութեր և հագուստ հոդվածով ծախսերը ծրագրվել են 40,396.9 հազ. դրամ, ինչը պակաս է 2018 թվականի հաստատված բյուջեից 32,758.8 հազ. դրամով, և հաշվարկվել են հիմք ընդունելով աշխատողների թվաքանակը և գործունեության համար անհրաժեշտ գրասենյակային նյութերը: Տրանսպորտային նյութերը ծրագրվել են 120,140.1 հազ. դրամի չափով 2018 թվականի ցուցանիշից 104,257.6 հազ. դրամով պակաս և հաշվարկվել են վարչական շրջաններին սպասարկող ավտոմեքենաների

թվաքանակով, ինչպես նաև որոշ կառուցվածքային ստորաբաժանումների առանձնահատկություններով պայմանավորված անձնական ավտոմեքենաների ծառայողական նպատակներով օգտագործման հանգամանքով: Կենցաղային և հանրային սննդի նյութերի գծով ծրագրվել է 21,701.5 հազ. դրամ 2018 թվականի հաստատված ցուցանիշից 906.9 հազ. դրամով պակաս: Հատուկ նպատակային այլ նյութերի գծով ծրագրվել է 4,000.0 հազ. դրամ նախորդ տարվա ցուցանիշից 4000.0 հազ. դրամով պակաս, որի շրջանակներում մշակութային միջոցառումների, տոնական և հիշատակի օրերի և այլ դեպքերի համար նախատեսվել է ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերում: Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին հոդվածով ծրագրվել է 277,340.6 հազ. դրամ, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի և 2-րդ վարչական շենքի պահպանման ծախսերը, այդ թվում՝ մաքրման ծառայությունները, նյութերը և ընթացիկ այլ աշխատանքները: Այլ նպաստներ բյուջեից հոդվածով նախատեսվել է 43,100.0 հազ. դրամ, որից 200.0 հազ. դրամը հատկացվում է որպես խեղձան նպաստ, իսկ 42,900.0 հազ. դրամը՝ որպես դրամական փոխհատուցում Երևան քաղաքի ավագանու անդամներին, և ծրագրվել է 2018 թվականին նախատեսված ցուցանիշի չափով: Պարտադիր վճարների գծով՝ կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների տեխնիկական զննման ծախսերի և տուրքերի վճարման համար ծրագրվել է 3,014.0 հազ. դրամ՝ 2018 թվականի բյուջեից 81.3 հազ. դրամով պակաս: Այլ ծախսեր հոդվածով ծրագրվել է 52,880.0 հազ. դրամ 2018 թվականի հաստատված ցուցանիշից 26380.0 հազ. դրամով ավելի՝ 2019 թվականի ընթացքում կառավարչական մարմնի պահպանման հետ կապված այլ չկանխատեսված ծախսերի կամ դրանց փոփոխությունների համար: Վարչական սարքավորումների գծով ծրագրվել է 28,838.0 հազ. դրամ 2018 թվականին նախատեսված 48,195.2 հազ. դրամի դիմաց կամ 19,357.2 հազ. դրամով պակաս: Ծրագրված գումարի շրջանակներում նախատեսվել է քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին տրամադրել միայն խիստ անհրաժեշտ գույք և տեխնիկա՝ ապահովելով առավելագույն խնայողություն: Այլ մեքենաներ և սարքավորումների գծով նախատեսվել է 51,920.0 հազ. դրամ, որը նախատեսվել է Արգիշտի 1 հասցեում գտնվող վարչական շենքի շահագործման ժամկետը սպառած հովացման համակարգի (չիլերի) փոխարեն նոր համակարգի

ձեռքբերման և տեղադրման համար: Ոչ նյութական հիմնական միջոցներ հոդվածով նախատեսվել է 24,500.0 հազ. դրամ հակավիրուսային համակարգի, սերվերային հանգույցներում վիրուսների տարածման կանխարգելիչ համակարգի, Երևանի քաղաքապետարանի կայքերի անվտանգության սերտիֆիկատի ձեռքբերման, ինչպես նաև փաստաթղթաշրջանառության նոր համակարգի ձեռքբերման համար:

2. **Երևան քաղաքին միջազգային վարկանիշ շնորհելու ծառայությունների դիմաց վճարման ծախսեր** ծրագրով նախագծով ծրագրվել է 14,000.0 հազ. դրամ: 2016 թվականին Երևանի քաղաքապետարանը վարկանիշ շնորհելու ծառայությունների ձեռքբերման համար պայմանագիր կնքեց Fitch միջազգային վարկանշային գործակալության հետ, որը ենթադրում է վարկանիշի վերանայում տարվա մեջ 2 անգամ: Հաշվի առնելով, որ ծրագիրը շարունակական է, 2019 թվականին ծրագրված գումարն ուղղվելու է նույն պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելուն:

3. **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)** ծրագրով ծրագրվել է 92,916.1 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշները:

4. **Նախագծային աշխատանքներ** ծրագրով նախատեսվել է 157,750.0 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված բյուջեով նախատեսված 137,750.0 հազ. դրամի դիմաց կամ 20,000.0 հազ. դրամով ավելի՝ 2019 թվականի բյուջեն ծրագրելիս կապիտալ ծրագրերը նախագծանախահաշվային փաստաթղթերով ապահովելու համար:

5. **Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծություն** ծրագրով նախատեսվել է 20,000.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև Երևան քաղաքի 2005-2020 թթ. գլխավոր հատակագծի ճշգրտման և լրամշակման աշխատանքներ:

6. **Գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակում** ծրագրով նախատեսվել է 60,000.0 հազ. դրամ՝ Նոր Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագծերի մշակման աշխատանքներն իրականացնելու համար:

7. **Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարումներ** ծրագրով նախատեսվել է 64,800.0 հազ. դրամ՝ դատարան դիմելիս պետական տուրքերի վճարման համար, ինչը 10,500.0 հազ. դրամով ավելի է 2018 թվականի ճշտված ցուցանիշից:

8. **Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ** ծրագրով նախատեսվել է 80,622.0 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված բյուջեի 86,322.0 հազ. դրամի դիմաց, ինչը ներառում է ինչպես Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցված գույքի, այնպես էլ ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում համայնքի սեփականություն ճանաչվող գույքի գրանցման և գնահատման ծախսերը, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից տեղեկատվություն ստանալու վճարները:

9. **Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն և Զինապարտների հաշվառման, գորակոչի, գորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցություն** ծրագրերով նախատեսվել է 32,000.0 հազ. դրամ 16,000.0 հազարական դրամ յուրաքանչյուր ծրագրի համար, ինչը պայմանավորված է գործող օրենսդրությամբ նախատեսված նվազագույն և անհրաժեշտ աջակցությունն ապահովելու խնդրով:

10. **Այլընտրանքային աշխատանքային ծառայության իրականացում** ծրագրով նախատեսվել է 8,460.0 հազ. դրամ՝ հիմք ընդունելով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված համապատասխան ծրագիրը:

11. **Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում** ծրագրով նախատեսվել է 154,000.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի վարչական շրջաններում առկա սիզամարգերում ոռոգման ապահովման համար՝ հիմք ընդունելով սահմանված կարգով կազմված նախահաշվային փաստաթղթերը, ինչպես նաև Նորք-Մարաշ վարչական շրջանում Արմենակյան փողոցում ոռոգման ցանցի հատվածի կապիտալ վերանորոգման համար:

12. **Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության»** ծրագրի իրականացման համար նախատեսվել է 1,401,550.0 հազ. դրամ, որից 280,310.0 հազ. դրամը Երևան համայնքի

բյուջեի համաֆինանսավորումն է: Ծրագրով նախատեսվում է իրականացնել էներգաարդյունավետությանը և էներգախնայողությանն ուղղված հիմնանորոգման աշխատանքներ, որը կներառի սեյսմակայունության ապահովման, արտաքին պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման, դռների և լուսամուտների փոխարինման, ջեռուցման/հովացման, օդափոխության և օդորակման համակարգերի, լուսավորության համակարգերի վերակառուցման, հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի հասանելիության ապահովման բաղադրիչները: Ծրագրով նախատեսվում է նաև վերականգնվող էներգիայի՝ արևային ֆոտովոլտային կայանների և արևային ջրատաքացուցիչների կիրառումը: Ծրագրի շրջանակում թվով 30 մանկապարտեզներում իրականացվել են սեյսմիկ հետազննության աշխատանքներ և էներգետիկ աուդիտ, որից հետո, հաշվի առնելով արդյունքներն ու եզրակացությունները, շուրջ երկու տասնյակ մանկապարտեզների համար հայտարարվել է նախագծային աշխատանքների ձեռքբերման մրցույթ:

13. Արևելյան Եվրոպայի էներգոախնայողության և բանապահպանական գործընկերության աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» դրամաշնորհային ծրագրի համար նախատեսվել է 1,401,550.0 հազ. դրամ, որից 280,310.0 հազ. դրամը Երևան համայնքի բյուջեի համաֆինանսավորումն է:

14. «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի համաֆինանսավորման նպատակով նախատեսվել է 600,000.0 հազ. դրամ, որպես պետական աջակցություն:

15. «Եվրոպական միությունը Երևանի արևային համայնքի համար.» դրամաշնորհային ծրագրի իրականացման համար նախատեսվել է 532,000.0 հազ. դրամ, որի շրջանակում նախատեսվում է 45 բազմաբնակարան շենքերի տանիքներին տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգեր՝ ապահովելով տվյալ շենքերի վերելակների, ընդհանուր օգտագործման և բակային տարածքների լուսավորության համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի արտադրությունը: Ծրագրի շրջանակում նախատեսվում է վերոնշյալ շենքերի շքամուտքերում (առաջինից մինչև վերջին հարկ) և բակային տարածքներում տեղադրել ժամանակակից էներգախնայող LED լուսատուներ: Կներդրվի նաև տվյալների առցանց հավաքագրման և վերլուծության մոնիթորինգային համակարգ:

16. **«Եվրոպական միությունը Երևանի արևային համայնքի համար»** ծրագրի համաֆինանսավորման համար նախատեսվել է 124,400.0 հազ. դրամ:

17. **Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում ու ասֆալտ-բետոնյա ծածկի հիմնանորոգում** ծրագրերով նախատեսվել է 4,031,000.0 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված բյուջեի 3,661,000.0 հազ. դրամի դիմաց կամ 370,000.0 հազ. դրամով ավելի: Նախատեսված գումարից 3,284,000.0 հազ. դրամը ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով ներկայացված նպատակային հատկացումն է (սուբվենցիա):

18. **Եզրաքարերի վերանորոգում** ծրագրով նախատեսվել է 52,250.0 հազ. դրամ՝ վթարված եզրաքարերի վերանորոգման և փոխարինման, ինչպես նաև քայքայված բետոնե եզրաքարերի վերականգնման համար, ինչն ավել է 2018 թվականի ճշտված ցուցանիշից 3,730.3 հազ. դրամով:

19. **Հենապատերի վերանորոգում** ծրագրով նախատեսվել է 94,500.0 հազ. դրամ՝ 2018 թվականի ճշտված բյուջեից 4,500.0 հազ. դրամով ավել: Հենապատերի ընտրությունը կատարվում է ըստ նրանց վթարայնության և վերանորոգման հրատապության աստիճանի:

20. **Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում** ծրագրով նախատեսվել է 85,000.0 հազ. դրամ: Ծրագրով նախատեսված ցուցանիշը պակաս է 2018 թվականի հաստատված բյուջեից 325,000.0 հազ. դրամով:

21. **Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում** ծրագրով նախատեսվել է 90,000.0 հազ. դրամ՝ 2018 թվականի ճշտված բյուջեով նախատեսված ցուցանիշի չափով և ուղղվելու է Երևան քաղաքի կամուրջների, վերգետնյա անցումների և ուղեանցների սպասարկման աշխատանքների իրականացմանը:

22. **Հրազդանի կիրճի բարեկարգում** ծրագրով նախատեսվել է 2,000.0 հազ. դրամ՝ ընթացիկ տարվա համապատասխան ցուցանիշի չափով՝ Արաբկիր վարչական շրջանի մասով ընթացիկ բարեկարգման և մաքրման աշխատանքների համար:

23. **Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում** ծրագրով նախատեսվել է 50,000.0 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշի չափով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել մայրերի սալիկապատման աշխատանքներ:

24. Փողոցների պահպանում և շահագործում ծրագրով նախատեսվել է 68,500.0 հազ. դրամ՝ 2018 թվականի բյուջեից 15,000.0 հազ. դրամով ավելի, որն հիմնականում ուղղվելու է Երևանի հիմնանորոգված փողոցների վթարված հատվածների վերականգնման, փողոցների միջնապատերի և այլ հատվածների ընթացիկ բարեկարգման աշխատանքներն իրականացնելու համար:

25. Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություն ծրագրով նախատեսվել է 694,000.0 հազ. դրամ, որից 444,000.0 հազ. դրամն իրենից ներկայացնում է ՀՀ կառավարության 01.12.2016 թվականի N 1214-Ա և Երևան քաղաքի ավագանու 21.12.2016թ. N 655-Ա որոշումների հիման վրա «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի 100% բաժնեմասը որպես նվիրատվություն ձեռք բերած Երևան համայնքի կողմից ծառայությունների մատուցման համար կնքված «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի հետ Երևան քաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունների մատուցման համար՝ ամսական 30.0 մլն դրամ հաստատուն գնով (ներառյալ ԱԱՀ) կամ տարեկան 360.0 մլն դրամով, և «Լոկատոր» ՓԲԸ-ի հետ հավատարմագրային կառավարման ծառայությունների մատուցման համար՝ ամսական 7.0 մլն դրամ գումարով (ներառյալ ԱԱՀ), կամ տարեկան 84.0 մլն դրամով, երկու նոր պայմանագրերով նախատեսված ծառայությունների մատուցման տարեկան ծախսերի հանրագումարը, իսկ 250,000.0 հազ. դրամը նախատեսվում է ավտոկայանատեղիների արդիական համակարգի ստեղծմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացման համար:

26. Թերահարթակների կառուցում և ավտոբուսներում թերահարթակների ապահովում ծրագրերով՝ տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժման մատչելիություն ապահովելու նպատակով նախատեսվել է 100,000.0 հազ. դրամ:

27. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում ծրագրով նախատեսվել է 192,350.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել և վարչական շրջանների փողոցներում տեղադրել նորաճ նստարաններ, աղբամաններ, փողոցների ուղենիշեր, ծառաբների մետաղական ծածկույթներ, հայտարարությունների ցուցատախտակներ, տեղադրել քաղաքային նոր ինստալյացիաներ, այգիներում ավելացնել նստարանների քանակը, բակերում տեղադրել զրուցարաններ, ինչպես նաև վերանորոգել նախորդ տարիներին տեղադրված նստարաններն ու աղբամանները:

28. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի իրացման միջոցառումներ ծրագրով նախատեսվել է 50,000.0 հազ. դրամ: Երևան քաղաքի շրջանցիկ ճանապարհի կառուցման ծրագրի իրականացման նպատակով Երևան քաղաքի վարչական սահմաններում բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում գտնվող օտարվող սեփականության (հողի) դիմաց փոխհատուցում տրամադրելու համար՝ որպես ներդրումային ծրագրի համաֆինանսավորում:

29. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսված է 1,876,705.3 հազ. դրամ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշի չափով, որի շրջանակներում նախատեսվում է շարունակել Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի կառուցման աշխատանքները: Ճանապարհահատվածի ընդհանուր երկարությունը կազմում է 9.4 կմ, միջին լայնությունը՝ 24մ է: Նախատեսված է կառուցել 3 ուղեանցեր (Օհանով փ., Տիչինա փ. և Չաուշ-Նոր Սիլիկյան խաչմերուկ), 3 անցումներ՝ երկրորդային ճանապարհների համար (Հին Սիլիկյան փողոց, Օհանով փողոցի մոտ և դեպի Մարս գործարան տանող ճանապարհի վրա) և մեկ տրանսպորտային հանգույց Նոր Սիլիկյան փողոցի հետ հատման վայրում: Նախատեսվում է Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի տակ գտնվող բոլոր հաղորդուղիները տեղափոխել ճանապարհի ազդեցության գոտուց դուրս:

30. Վերելակների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 30,779.0 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված բյուջեից 77,991.1 հազ. դրամով պակաս՝ բազմաբնակարան շենքերի վերելակների համար խիստ անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերման և տեղադրման նպատակով:

31. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 2,742,686.4 հազ. դրամ՝ մետրոպոլիտենի սուբսիդավորման նպատակով՝ որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշը:

32. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություն ծրագրով նախատեսվել է 602,201.9 հազ. դրամ որպես սուբսիդիա «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ին, որի ծրագրման հիմքում ընկած է ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումը (սուբվենցիա):

33. Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) նախատեսվել են ընդհանուր 2,440,317.8 հազ. դրամի ծրագրեր որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված համապատասխան ծրագրերը (ցանկը կցվում է):

34. Ջրոսաշրջության զարգացում ծրագրով նախատեսվել է 138,000.0 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված ցուցանիշից 83,000.0 հազ. դրամով ավելի՝ Երևան քաղաքի (այդ թվում՝ տեսարժան վայրերի) վերաբերյալ տեղեկատվական բուկլետների տպագրման և տարածման, Երևանը զրոսաշրջիկների համար ճանաչելի դարձնելուն ուղղված միջոցառումների, տեղեկատվական հարթակների, ինչպես նաև մարքեթինգային քաղաքականության իրականացման համար:

35. Դրոշների տեղադրում ծրագրով նախատեսվել է 45,000.0 հազ. դրամ, ինչը ներառում է ինչպես հատուկ օրերին քաղաքի դրոշակազարդման աշխատանքները, այնպես էլ քաղաքի տարբեր հատվածներում ՀՀ դրոշների տեղադրումը, պարբերաբար փոխարինումը, սպասարկումը և նախատեսվել է 2018 թվականի հաստատված ցուցանիշի չափով:

36. Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար ծրագրով նախատեսվել է 5,503.0 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված ցուցանիշի չափով, ինչը ծրագրավորվել է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի հ. 1910-Ն որոշման հ.1 հավելվածի 16-րդ կետը և նախատեսվել է գերեզմանատների վրա անվճար տեղադրվող մետաղական ցուցանակների, ինչպես նաև Կոմիտասի անվան պանթեոնի պահպանության համար:

37. Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում

ծրագրով նախատեսվել է 100,973.4 հազ. դրամ՝ քաղաքապետարանի ծրագրային ապահովում և ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ին սուբսիդավորելու համար և ծրագրվել է 2018 թվականի հաստատված ցուցանիշից 71,640.0 հազ. դրամով պակաս:

38. Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին

ծրագրով նախատեսվել է 570,000.0 հազ. դրամ՝ կրթական, մշակութային, սոցիալ-հոգեբանական, բնապահպանական, հանրային խնդիրներով զբաղվող հասարակական և այլ կազմակերպությունների Երևան քաղաքին վերաբերող ծրագրերին աջակցելու նպատակով:

39. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր

ծրագրով նախատեսվել են մուտքեր 3,370,000.0 հազ. դրամ, այդ թվում՝

ա) անշարժ գույքի իրացումից մուտքերը ծրագրվել են 320,000.0 հազ. դրամի չափով,

բ) հողի օտարումից մուտքերը ծրագրվել են 3,050,000.0 հազ. դրամի չափով, որից 2,900,000.0 հազ. դրամը՝ հողերի աճուրդով և ուղղակի վաճառքով օտարումներից, իսկ 150,000.0 հազ. դրամը՝ օրինականացված ինքնակամ կառույցների զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողերի օտարումից: Հաշվարկներն իրականացվել են հիմք ընդունելով գույքագրման արդյունքները, ընթացիկ տարվա օտարման միտումները և գործընթացի ողջամիտ ակտիվացման հնարավորությունները:

40. Տոնական ձևավորում

ծրագրով նախատեսվել է 50,000.0 հազ. դրամ՝ տոնական օրերին Երևան քաղաքը պատշաճ ձևավորելու համար, ինչը հավասար է 2018 թվականի համար հաստատված ցուցանիշին:

41. Հասցեավորման աշխատանքներ

ծրագրով նախատեսվել է 115,000.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի «Անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին» N 224-Ն որոշման համաձայն հասցեավորման ծառայություններ ձեռք բերելու նպատակով և հաշվարկվել է 2018 թվականի կանխատեսվող կատարողականից ելնելով:

42. Ներդրումային ծրագրերի իրականացում

ծրագրով նախատեսվում է 149,000.0 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված բյուջեից 20,800.0 հազ. դրամով ավելի, որից 19,000.0 հազ. դրամը նախատեսվում է ներդրումային ծրագրերի

վերաբերյալ տարատեսակ տեղեկատվական բրոշյուրների, բուկլետների, կատալոգների և ներդրումային տեղեկատվական գրքույկների տպագրության համար, որը նպատակ ունի իրագեկելու հնարավոր ներդրողներին, ինչպես նաև հասարակության լայն շերտերին մայրաքաղաքում հնարավոր ներդրումներ իրականացնելու համար, իսկ 130,000.0 հազ. դրամը նախատեսվում է որպես սուբսիդիա հատկացնել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ին:

43. Պարտադիր վճարների գանձման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 147,223.0 հազ. դրամ, որից 16,465,6 հազ. դրամը՝ աղբահանության վճարների կանխիկ գանձման անդորրագրերի տպագրության համար, 130,757.4 հազ. դրամը՝ աղբահանության վճարների գանձման ծառայության դիմաց վճարման համար: Ծառայությունների դիմաց վճարումը նախատեսվել է փաստացի գանձվող աղբահանության վճարի 3%-ի չափով:

44. Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար մատչելիության ապահովում ծրագրով նախատեսվել է 15,000.0 հազ. դրամ՝ ավտոբուսներում ուղևորների և կույր հաշմանդամների համար հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության ապահովման, կանգառները ավտոմատ հայտարարման համակարգով կահավորման համար:

45. Տոնավաճարների կազմակերպում ծրագրով նախատեսվել է 1,020.0 հազ. դրամ, որը նախատեսվում է բաշխել վարչական շրջանների միջև համամասնաբար, տոնավաճառների աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար:

46. Աղբահանություն և սանիտարական մաքրում ծրագրով նախատեսվել է 5,276,451.8 հազ. դրամ, որից՝ 5,246,451.8 հազ. դրամը Երևան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ ձեռք բերելու համար, իսկ 20,000.0 հազ. դրամը ծրագրված է աղբամանների համար գրպանիկների կառուցման նպատակով:

47. Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 352,136.5 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված ցուցանիշի չափով: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համապատասխան ընտրված օպերատորի միջոցով սպասարկել Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի աղբամուղերը (խցանման մաքրում, ախտահանում), իրականացնել աղբամուղերի աղբընդունիչների

վերանորոգումը, ինչպես նաև ապահովել վարչական շրջաններում հավաքված (ըված) շինարարական աղբի բարձումն ու տեղափոխումը:

48. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության Ֆոնդի և Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի աջակցությամբ իրականացվող «Երևանի կոշտ թափոնների կառավարման» ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) նախատեսվել է 2,796,134.5 հազ. դրամ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշի չափով, որի շրջանակներում նախատեսվում է Նուբարաշենի առկա աղբավայրի հարակից՝ շուրջ 32 հա տարածքում նախագծել, կառուցել և շահագործել եվրոպական չափանիշներին համապատասխան նոր աղբավայր, ինչպես նաև նույն չափորոշիչներին համապատասխան մեկուսացնել Նուբարաշենի և Աջափնյակի գործող աղբավայրերը:

49. Գետերի հունների մաքրում ծրագրով նախատեսվել է 38,683.0 հազ. դրամ՝ ըստ վարչական շրջաններով անցնող հատվածների՝ համապատասխան հաշվարկներով, 2018 թվականի հաստատված ցուցանիշի չափով:

50. Կանաչ տարածքների հիմնում և պահպանում ծրագրով նախատեսվել է 1,289,850.0 հազ. դրամ՝ 2018 թվականին նախատեսված ցուցանիշից 379,150.0 հազ. դրամով պակաս, որը ներառում է կանաչ տարածքների պահպանման ծառայությունների, նյութերի և ոռոգման ջրի արժեքի, ծառերի էտման ծառայության, տնկիների ձեռքբերման և քաղաքի սեփականություն հանդիսացող տնկարանի պահպանման ծախսերը:

51. Ախտահանման և միջատազերծման ծառայություններ ծրագրով նախատեսվել է 28,591.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի տարբեր հատվածներում դեռատիզացիոն աշխատանքների կազմակերպման համար և ծրագրվել է 2018 թվականի ցուցանիշից 9,484.0 հազ. դրամով պակաս:

52. Հասարակական գուգարանների պահպանում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 4,920.0 հազ. դրամ՝ պահպանման և մաքրման աշխատանքները կազմակերպելու համար:

53. Սիզամարգերի ստեղծում և ծաղկապատում ծրագրով նախատեսվել է 269,500.0 հազ. դրամ՝ 2018 թվականի ճշտված բյուջեից 42,000,0 հազ. դրամով

պակաս, ինչի շրջանակներում նախատեսվում է գազոնապատել և ծաղկապատել քաղաքի փողոցների, հրապարակների և քաղաքի մուտքերի շրջակայքը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև ձեռք բերել ծաղկասածիլներ, սիզամարգերի ստեղծման և պահպանման համար անհրաժեշտ բուսահող և կարմիր ավազ, ինչպես նաև ապահովել տեղական մշտադալար տնկիների և սածիլների ձեռքբերումը՝ դրանով իսկ էապես ավելացնելով Երևան քաղաքի սիզամարգերի ծաղկապատ և կանաչապատ մակերեսները:

54. **Թափառող կենդանիների վնասագերծում (ստերիլիզացիա)** ծրագրով նախատեսվել է 50,000.0 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված բյուջեից 64,602.2 հազ. դրամով պակաս՝ Երևան քաղաքում թափառող կենդանիների վնասագերծման խնդիրը կանոնակարգելու համար:

55. **Ինքնակամ կառույցների քանդում** ծրագրով նախատեսվել է 20,000.0 հազ. դրամ, որից 15,000.0 հազ. դրամը այն ինքնակամ կառույցների քանդման համար, որոնք հնարավոր չէ իրականացնել կառուցապատողների հաշվին, իսկ 5,000.0 հազ. դրամը՝ Երևան քաղաքում ապօրինի տեղադրված գովազդային վահանակների ապամոնտաժման աշխատանքների իրականացման նպատակով:

56. **Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերում** ծրագրով 2019 թվականին նախատեսվում է 451,980.0 հազ. դրամ, որով չորրորդ կարգի վթարային շենքերի բնակիչների անվտանգության ապահովման ծրագրի շարունակականության ապահովման շրջանակներում ծրագրվում է քանդված նախկին վթարային շենքի տարածքում (Սիսակյան 3) շարունակել նոր բազմաբնակարան շենքի կառուցման աշխատանքները, որի ամբողջական ավարտը նախատեսվում է 2020 թվականի ամռանը, ինչպես նաև թվով 3 ընտանիքների բնակարանների վարձակալության գումարները:

57. **Շենքերի գեղարվեստական լուսավորում** ծրագրով նախատեսվել է 9,000.0 հազ. դրամ՝ Շենգավիթ վարչական շրջանում Գ. Նժդեհի հրապարակի և Բագրատունյաց փողոցի շենքերի նեոնային լուսավորությունը վերականգնելու և պահպանելու նպատակով:

58. **Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ** ծրագրով նախատեսվել է 2,229,951.6 հազ. դրամ ներկայումս գործող

լուսավորության ռեժիմի պահպանման պարագայում աշխատանքների կազմակերպման համար: Ծրագիրը նախատեսված է ՀՀ 2019 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացման (սուբվենցիայի) հաշվին:

59. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ և Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի միջոցներով Ֆինանսավորվող «Երևանի քաղաքային լուսավորության» ծրագրերով (պատվիրակված լիազորություններ) նախատեսվել է 1,326,116.0 հազ. դրամ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշի չափով, որի շրջանակներում իրականացվում է Երևան քաղաքի թվով 28 փողոցների լուսավորության ցանցի արդիականացման ծրագիրը, որը նախատեսում է առկա էներգատար լուսատուները փոխարինել խնայող LED տիպի լուսատուներով, փոխել/ամրացնել լուսավորության հենասյուները, առկա վերգետնյա մալուխներն անցկացնել ստորգետնյա կապուղիներով և ներդնել լուսավորության ցանցի կառավարման համակարգ:

60. Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ ծրագրով նախատեսվել է 7,000.0 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված բյուջեից 8,000.0 հազ. դրամով պակաս , ինչը ներառում է բազմաբնակարան շենքերի վթարայնության աստիճանի հետազոտումը և ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում կառույցների վերաբերյալ տեխնիկական եզրակացությունների տրամադրումը:

61. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում և բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում ծրագրերով նախատեսվել է ընդհանուր 412,549.4 հազ. դրամ՝ 2018 թվականի ճշտված բյուջեի 439,778.2 հազ. դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում տանիքների նորոգման և պահպանման աշխատանքները կազմակերպվելու են տարբեր մոտեցումներով (աշխատանքների պատվեր, նյութերի տրամադրում համատիրություններին և այլն):

62. Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում ծրագրով նախատեսվել է 1,168,382.4 հազ. դրամ՝ վարչական շրջանների կողմից ընտրված բակերի բարեկարգման:

63. Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ ծրագրով նախատեսվել է ընդհանուր 908,755.9 հազ. դրամ, որից 20,000.0 հազ.

դրամը նախատեսվում է շենքերի ֆասադների ընթացիկ նորոգման և մաքրման համար, 2,500.0 հազ. դրամը՝ շենքից թափվող սալերից պաշտպանիչ միջոցառումների համար, իսկ 886,255.9 հազ. դրամը՝ բազմաբնակարան շենքերի մուտքերի ամբողջական վերանորոգման, ջրթափ խողովակների փոխարինման և այլ աշխատանքների համար: Ծրագրված ցուցանիշը պակաս է 2018 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 11,416.5 հազ. դրամով:

64. Ջրային կառույցների շահագործում և պահպանում ծրագրով նախատեսվել է 325,500.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող բոլոր շատրվանների շահագործման և ընթացիկ նորոգման համար՝ 2018 թվականի նույն ցուցանիշի չափով:

65. Կաթսայատների պահպանում ծրագրով նախատեսվել է 12,375.8 հազ. դրամ, 2018 թվականի ճշտված բյուջեի ցուցանիշից 12,375.8 հազ. դրամով պակաս և ներառում է Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցված կաթսայատների զուտ պահպանման (պահակային ծառայության նվազագույն արժեքը) ծախսերը: Ծախսերի կրճատումը դիտարկվում է համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի արդյունավետ կառավարման համատեքստում:

66. Կամարանցումների և այլ շինությունների վերանորոգում և գունազարդում ծրագրով նախատեսվել է 20,000.0 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված ցուցանիշից 20,000.0 հազ. դրամով պակաս, ինչը ներառում է շենքերի դեկորատիվ գունազարդումը, քաղաքի վնասված կամարանցումների վերանորոգումը, քաղաքային մետաղյա հենասյունների վերանորոգումը և հատուկ նյութով երեսապատումը:

67. Վթարային պատշգամբների նորոգում ծրագրով նախատեսվել է 53,000.0 հազ. դրամ՝ 2018 թվականի ճշտված ցուցանիշի չափով:

68. Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում ծրագրով նախատեսվել է համայնքային կազմակերպություններին հատկացնել 146,710.0 հազ. դրամ՝ 2018 թվականի բյուջեով նախատեսված 70,000.0 հազ. դրամի դիմաց՝ առաջնային օղակի առաջնահերթ համարվող բժշկական սարքավորումների ձեռք բերման համար:

69. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով նախատեսվել է 150,000.0 հազ. դրամ՝ համայնքային ենթակայության պոլիկլինիկաների վերանորոգման նպատակով:

70. Դժվարամատչելի հետազոտությունների իրականացում ծրագրով նախատեսվել է 13,250.0 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված բյուջեի ցուցանիշից 4,750.0 հազ. դրամով պակաս, որի շրջանակներում նախատեսվել է սոցիալապես անապահով քաղաքացիներին կոմպյուտերային տոմոգրաֆիայի, ինչպես նաև սքրինինգային հետազոտության ծառայությունների տրամադրման համար:

71. Աջակցություն առողջապահական կազմակերպություններին ծրագրով նախատեսվել է 70,000.0 հազ. դրամ՝ համայնքային ենթակայության առողջապահական կազմակերպություններին աջակցություն տրամադրելու համար:

72. Սպորտային միջոցառումների կազմակերպում ծրագրով նախատեսվել է 109,920.4 հազ. դրամ՝ 2018 թվականի համեմատ 31,899.3 հազ. դրամով պակաս՝ հիմք ընդունելով նախորդ տարիներին իրականացված, 2019 թվականին սպասվող միջոցառումների քանակը:

73. Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում ծրագրով նախատեսվել է 421,000.0 հազ. դրամ, որից՝ 30,000.0 հազ. դրամը՝ Սիրահարների զբոսայգու պահպանման, իսկ 391,000.0 հազ. դրամը նոր հանգստի գոտիների կառուցման համար:

74. Հեծանվահրապարակի շահագործում ծրագրով նախատեսվել է 30,000.0 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված բյուջեից 33,000.0 հազ. դրամով պակաս՝ հեծանվահրապարակի վերանորոգման և գործունեության ապահովման համար:

75. Գրադարանային ծառայություններ ծրագրով նախատեսվել է 489,710.6 հազ. դրամ՝ Երևանի համայնքային գրադարանային կազմակերպություններին սուբսիդիա տրամադրելու համար:

76. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ ծրագրով Երևանի ենթակայության թանգարանների պահպանման համար ՀՀ 2019 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների մասով նախատեսվել է 316,004.7 հազ. դրամ:

77. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում ծրագրով նախատեսվել է 380,384.5 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված բյուջեի չափով,

Երևանի ենթակայության մշակույթի տների և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների պահպանման նպատակով:

78. Մշակութային միջոցառումների իրականացում ծրագրով նախատեսվել է 614,755.7 հազ. դրամ՝ 2018 թվականի բյուջեից 443,000.0 հազ. դրամով պակաս: Նվազեցումը կատարվել է հաշվի առնելով 2018 թվականի համար Երևանի 2800 ամյակի հորեյանական միջոցառումների անցկացման վրա կատարված ծախսերի չափը:

79. Կենդանաբանական այգու ցուցադրություններ ծրագրով նախատեսվել է 302,409.2 հազ. դրամ՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ–ի սուբսիդավորման համար՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

80. Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ ծրագրով նախատեսվել է 121,390.6 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված բյուջեի 112,586.1 հազ. դրամի դիմաց՝ Երևանի ենթակայության «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա», «Երևան» փողային նվագախումբ», «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլհարմոնիա», «Մարաթուկ» մշակութային կենտրոն» ՀՈԱԿ–ների և «Հայ-Արտ» մշակութային կենտրոն ՓԲԸ–ի սուբսիդավորման համար:

81. Թատերական ներկայացումներ ծրագրով նախատեսվել է 435,900.1 հազ. դրամ Երևանի ենթակայության թվով 3 թատրոնների սուբսիդավորման համար ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

82. Հուշարձանների վերանորոգում և պահպանում ծրագրով նախատեսվել է 11,000.0 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված բյուջեից 3,000.0 հազ. դրամով պակաս՝ հուշարձանների լվացման և այն հուշարձանների նորոգման և պահպանման համար, որոնք ընդգրկված չեն պետական պահպանության ենթակա հուշարձանների ցանկում:

83. Անդամակցության վճարներ ծրագրով նախատեսվել է 9,325.0 հազ. դրամ՝ Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի, Եվրոպական քաղաքների ասոցիացիայի (EUROCITIES), Միջազգային քաղաքային համայնքների լուսավորում ասոցիացիայի (LUCI), ԱՊՀ մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային ասամբլեայի, Համաշխարհային ժառանգության քաղաքների

կազմակերպության և Տեղական իշխանությունները հանուն կայունության ասոցիացիայի անդամակցության վճարները վճարելու համար:

84. Նախադպրոցական ուսուցում ծրագրով նախատեսվել է 7,907,046.8 հազ. դրամ 2018 թվականի հաստատված բյուջեի 7,797,426.8 հազ. դրամի դիմաց կամ 109,602.0 հազ. դրամով ավելի: Հաշվարկների հիմքում դրվել է 1 երեխային ամսական ուսուցման (պահպանման) ծախսերի միջին ինքնարժեքը, որը ծրագրվել է 2018 թվականի չափով՝ 22.5 հազ. դրամ, ինչպես նաև յուրաքանչյուր ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար ամսական 650,0 հազ. դրամ, իսկ բյուջեից հատկացումները նախատեսվել են հաշվի առնելով 2018 թվականին երեխաների փաստացի միջին թիվը՝ որոշակի աճի հնարավորությամբ:

85. Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում ծրագրով նախատեսվել է 150,000.0 հազ. դրամ՝ 2018 թվականի ճշտված բյուջեից 90,000.0 հազ. դրամով պակաս, ինչի շրջանակներում ըստ վարչական շրջանների ներկայացրած հայտերի նախատեսվում է Երևանի համայնքի ենթակայության մանկապարտեզների համար ձեռք բերել մանկական կահույք, կենցաղային էեկտրական սարքավորումներ և այլ անհրաժեշտ գույք: Ծրագիրը շարունակական է մինչև խնդրի ամբողջական կարգավորումը:

86. Նախադպրոցական կրթություն (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 19,779.4 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի նախագծի ցուցանիշների հիման վրա:

87. Հանրակրթական ուսուցում, հատուկ կրթություն, ներառական կրթություն և երեկոյան ուսուցում ծրագրերով նախատեսվել է 16,346,303.3 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ցուցանիշներով և հաշվարկվել է օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով:

88. Արտադպրոցական դաստիարակություն ծրագրով նախատեսվել է 3,424,313.2 հազ. դրամ, ինչը հիմնականում ներառում է Երևանի ենթակայության երաժշտական, սպորտի, արվեստի և շախմատի դպրոցների սուբսիդավորումը: Նշված ծրագիրը ներառում է նաև թվով 2 սպորտդպրոցների պահպանման ծախսերը, որոնք նախատեսվել են ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին՝ 62,595.8 հազ. դրամի չափով: Ծրագրով

նախատեսված գումարի էական աճը նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ պայմանավորված է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով արտադարձական դաստիարակության հաստատությունների՝ տվյալ պարագայում երաժշտական և արվեստի դպրոցների կողմից մատուցվող ծառայություններից օգտվողների կողմից կատարված վճարները՝ որպես տեղական վճար սահմանելու հանգամանքով:

89. «Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ-ում արտադարձական դաստիարակության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 7,547.8 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծի հիման վրա:

90. Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում ծրագրով նախատեսվել է 142,358.7 հազ. դրամ՝ որպես սուբսիդիա՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

91. Արտադարձական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում ծրագրով նախատեսվել է 70,000.0 հազ. դրամ՝ 2018 թվականին նախատեսվածից 30,000.0 հազ. դրամով պակաս, որից՝ 50,000.0 հազ. դրամը Երևանի ենթակայության երաժշտական դպրոցների համար գույքի և երաժշտական գործիքների ձեռք բերման համար, 20,000.0 հազ. դրամը՝ մարզական կազմակերպությունների համար մարզագույքի ձեռք բերման համար:

92. Նախադարձական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում ծրագրով նախատեսվել է 1,397,500.0 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված ցուցանիշից 295,499.7 հազ. դրամով ավելի: Ծրագրով նախատեսվում է խիստ անհրաժեշտության և առաջնահերթության սկզբունքի պահպանմամբ իրականացնել նախադարձական հաստատությունների հիմնանորոգում համաձայն ներկայացված նախագծերի և անշարժ գույքի փաստացի իրավիճակի ուսումնասիրման, ինչպես նաև Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի իրականացման համար 2019 թվականին նախատեսվող շուրջ երկու տասնյակ մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքներին մասնակից լինելու համար:

93. Դպրոցական օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում
ծրագրով նախատեսվել է 29,200.0 հազ. դրամ՝ 2018 թվականի ճշտված ցուցանիշից 2,000.0 հազ. դրամով ավելի, որի շրջանակներում նախատեսվում են մարզական խաղերի կազմակերպում, մանկավարժների խրախուսման միջոցառումների անցկացում, «Ազգային Ժողովի գավաթի» կազմակերպում, առարկայական օլիմպիադաներ, շախմատի օլիմպիադա, հորեյանական միջոցառումներ, այցելություններ քույր քաղաքներ և համագործակցություն ներառական կրթություն իրականացնող դպրոցներին աջակցող թիմերի հետ:

94. Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 31,097.9 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջի նախագծով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

95. Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հանգստի կազմակերպում ծրագրով նախատեսվել է 6,777.0 հազ. դրամ՝ 2018 թվականի ճշտված ցուցանիշից 350.0 հազ. դրամով ավել և հաշվարկվել է նախորդ տարիների փաստացի կատարված նմանատիպ ծախսերի հիման վրա:

96. Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում ծրագրով նախատեսվել է 31,303.5 հազ. դրամ՝ 2018 թվականի 31,603.5 հազ. դրամի դիմաց և հաշվարկվել է նախորդ տարիների փաստացի կատարված նմանատիպ ծախսերի հիման վրա:

97. Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցություն, սոցիալապես անապահով անձանց աջակցություն, և հասարակական կազմակերպություններին աջակցություն ծրագրերով նախատեսվել է 515,989.5 հազ. դրամ՝ 2018 թվականի հաստատված ցուցանիշից 143,398.0 հազ. դրամով պակաս և հաշվարկված է հստակ ծրագրային մոտեցումներից, բնակչության առանձնացված խմբերի աջակցության միջոցառումներից ելնելով:

98. Սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվել է 363,719.6 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն:

99. Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով նախատեսվում է 692,496.0 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն:

100. Առողջության ապահովագրություն ծրագրով նախատեսվել է 459,534.0 հազ. դրամ, 2018 թվականի ցուցանիշից 40,310.0 հազ. դրամով ավելի, ինչը պայմանավորված է շահառու յուրաքանչյուր աշխատակցի համար առողջության ապահովագրության փաթեթի սահմանաչափի (գումարի) գումարի ավելացմամբ, որը 52.0 հազ. դրամի փոխարեն նախատեսվում է սահմանել 57.0 հազ. դրամ, ինչը ապահովագրություն ստացող անձի պարագայում տարվա կտրվածքով նախատեսում է մինչև 4 000 000 դրամի առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորություն: Առողջության ապահովագրության ծառայություններ են ձեռք բերվում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի, վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցների, շախմատի դպրոցների, մանկապարտեզների աշխատակիցների, «Երևանտրանս» ՓԲԸ-ի վարորդների, «ԳՇՊՇ» ՓԲԸ-ի սպասարկող անձնակազմի, Երևան քաղաքի թատրոնների և թանգարանների, գրադարանների աշխատակիցների համար:

101. Աշխատակազմի աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում ծրագրով նախատեսվել է 45,000.0 հազ. դրամ: Ծրագրով նախատեսվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին՝ սոցիալական խնդիրների բարելավման նպատակով, ապահովել սոցիալական փաթեթով: Ծրագիրը լինելու է շարունակական և տարեց տարի, բյուջետային ծախսերի հնարավորության շրջանակներում նախատեսվում է դրանում ներառել Երևանի քաղաքապետարանի վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցներին, Երևանի քաղաքապետարանի ենթակայության կազմակերպությունների առողջապահական փաթեթի շահառու հանդիսացող մնացյալ խմբերին:

Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի նախագծով նախատեսվում է 1,269,240.0 հազ. դրամի չափով պակասուրդ: Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգասարդյունավետության» ծրագրի շրջանակներում նախատեսվում է վարկի ստացում 1,121,240 հազ. դրամ, տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսվում է 650,000.0 հազ. դրամի չափով: Միաժամանակ տարեսկզբի ազատ մնացորդից նախատեսվում 340,000.0 հազ. դրամն ուղղել ՀՀ

կառավարության 01.12.2016 թվականի N 1214-Ա և Երևան քաղաքի ավագանու 21.12.2016թ. N 655-Ա որոշումների հիման վրա Երևան համայնքի կողմից 100% բաժնեմասը որպես նվիրատվություն ձեռք բերած «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում ներդրում կատարելու միջոցով ակտիվների ձեռք բերման համար ՓԲԸ-ի վերցված փոխառությունները համաձայն ժամանակացույցի մարելու պարտավորությունների մարմանը, 12,000.0 հազ. դրամն ուղղել «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռք բերմանը, իսկ 150,000,0 հազ. դրամը՝ «Երևան ավտոբուս» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռք բերմանը:

Տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսված ցուցանիշ է, որը կճշգրտվի 2018 թվականի բյուջետային տարվա ավարտից հետո:

Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի նախագիծը՝ հաստատված ժամանակացույցի համաձայն, 2018 թվականի նոյեմբերի 11-ին ներկայացվել է Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի անդամներին, նոյեմբերի 14-ին հրավիրված նիստում տվել է իր դրական եզրակացությունը 2018 թվականի նոյեմբերի 14-ից մինչև նոյեմբերի 29-ը Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ իրականացնելու համար: Հանրային քննարկման հրապարակայնությունը, մատչելիությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով հանրային քննարկման մասնակցության հրավերը հրապարակվել է մամուլում և Երևան քաղաքի պաշտոնական կայքում: Միաժամանակ ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական <http://www.e-draft.am> կայքում, ինչպես նաև Երևան քաղաքի պաշտոնական կայքում հրապարակվել է Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի նախագծի էլեկտրոնային տարբերակը կից բացատրագիր-հիմնավորմամբ: 2018 թվականի նոյեմբերի 29-ին Երևանի քաղաքապետարանում կազմակերպվել է Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի նախագծի հանրային քննարկում՝ հանրային բաց լսումների եղանակով, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան ամփոփաթերթ: Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 3-ին կայացած նիստում ամփոփվել են հանրային քննարկման

արդյունքները: Նույն նիստում Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդը տվել է իր դրական եզրակացությունը Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի նախագիծը Երևանի ավագանուն ներկայացնելու համար:

Այսպիսով, Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի նախագիծը առաջարկվում է հաստատել.

1. *Եկամուտների գծով՝ 83,077,572.0 հազ. դրամ,*
2. *ծախսերի գծով՝ 84,346,812.0 հազ. դրամ,*
3. *դեֆիցիտը՝ 1,269,240.0 հազ. դրամ:*

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԿԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակ, գրության ստացման ամսաթիվ, գրության համար	Առաջարկության և/կամ առարկության բովանդակություն	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1	2	3	4	5
1.	<p>Գագիկ Ավագյան</p> <p>(ստացված է Իրավական ակտերի միասնական հրապարակման https://www.e-draft.am կայքով 26.11.2018թ.)</p>	<p>Առաջարկում եմ հրապարակել աջակցություն առողջապահության կազմակերպությունների ծրագրով նախատեսված գումարների (170 մլն.) իրավական հիմքը, քանակական բնութագիրը և այն խնդիրներն ու նպատակները, որոնց լուծմանն են ուղղվելու դրանք:</p>	<p>Առաջարկը մասամբ ընդունվել է և հանրային լսումներից հետո այս ծրագրով նախատեսված ծախսերը կրճատվելու են 100 մլն դրամով, իսկ մնացած գումարը նախատեսվում է համայնքային ենթակայության առողջապահական կազմակերպություններին աջակցություն տրամադրելու համար:</p>	<p>Նախագծում նշված ծրագրով կատարվել նվազեցում է 100մլն. դրամի չափով:</p>

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակ, գրության ստացման ամսաթիվ, գրության համար	Առաջարկության, առարկության կամ հարցադրման բովանդակություն	Պարզաբանում/ Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4	5
1.	<p>Փագիկ Ավագյան (ստացված է Իրավական ակտերի միասնական հրապարակման կայքով 15.11.2018թ.)</p>	<p>«Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան համայնքի բյուջեի նախագիծը բաղկացած է համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձից և համայնքի բյուջեյի մասին ավագանու որոշման նախագծից, այնինչ Երևան քաղաքի 2019թ. բյուջեի նախագիծը e-draft.am կայքում հանրային քննարկման է ներկայացվել առանց Երևանի քաղաքապետի բյուջետային ուղերձի, ինչն ըստ էության նշանակում է նախագիծը ներկայացվել է առանց իրավական հիմքի, բովանդակության, հիմնավորման և օրենքով նախատեսված այլ պարտադիր պահանջների:</p> <p>1.Առաջարկում եմ համագործակցելով համայնքների ֆինանսիստների միավորման հետ ամբողջականացնել նախագիծը օրենսդրությանը համապատասխան և կրկին ներկայացնել հանրային քննարկման:</p> <p>2.Առաջարկում եմ Արդարադատության նախարարությանը հետևել e-draft.am կայքով հրապարակվող նախագծերի ամբողջականությանը և թերի նախագծեր չհրապարակել:</p>	<p>Երևանի քաղաքապետի 2019 թվականի բյուջետային ուղերձը տեղադրված է:</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

<p>2. Փագիկ Ավագյան (ստացված է Իրավական ակտերի միասնական հրապարակման https://www.e-draft.am կայքով 19.11.2018թ.)</p>	<p>Թեև բյուջեյի նախագիծի որևէ գումար կամ ցուցանիշ ուղերձով հիմնավորված չէ, այնուհանդերձ ներկայացնում եմ առաջարկներ համեմատելով նախորդ տարվա բյուջեների ցուցանիշները հետ.</p> <p>Ա. Բազմիցս հարց է բարձրացվել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի թվաքանակը ուռճացված լինելու վերաբերյալ, սակայն նախագծում աշխատավարձի ֆոնդը պահպանվել է նախորդ տարվա չափով, ինչը նշանակում է, որ աշխատակազմի կրճատում չի նախատեսվում կամ եթե նախատեսվում է ապա նույն չափով ցուցանիշ նախատեսելը հիմնովին չէ:</p> <p>Առաջարկում եմ ակնկալվող կրճատումների չափով նվազեցնել աշխատավարձի ֆոնդը և այն ուղղել Երևան քաղաքի բնակիչների համար կարևորագույն խնդիրների լուծմանը, օրինակ՝ 3-րդ կարգի վթարային շենքերի ամրացմանը:</p> <p>Բ. Անհասկանալի և անընդունելի է ներկայիս սոցիալական իրավիճակում ուռճացված աշխատակազմի պարզևատրման ֆոնդի շուրջ 2.5 անգամ (1.2 մլրդ. դրամ) ավելացումը այն պարագայում, երբ նախկինում նախատեսված 800 մլն. դրամ ֆոնդը անընդունելի էր ինչի մասին բազմիցս բարձրաձայնվել էր:</p> <p>Առաջարկում եմ պարզևատրման ֆոնդը նվազեցնել 1.4 մլրդ. դրամով և այն ուղղել քաղաքի բնակչության կյանքին վտանգ սպառնացող վերելակների ձեռքբերմանը և փոխարինմանը:</p> <p>Վերելակների ձեռք բերման և փոխարինման գներն ու բնութագրերը հասանելի են համացանցում կամ առաջարկն ընդունելու դեպքում կարող եմ ներկայացնել լրացուցիչ:</p>	<p>Ա. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համայնքի ղեկավարն իր պաշտոնը ստանձնելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը: Հաշվի առնելով ներկայացման սեղմ ժամկետը, և այն, որ հաստիքացուցակի օպտիմալացման շրջանակներում առաջանում է խորքային ուսումնասիրման անհրաժեշտություն, որը պահանջում է որոշակի ժամանակ, որոշվել է հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի փոփոխությանն անդրադառնալ ուսումնասիրության արդյունքների ամփոփումից հետո: Արդյունքում հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը Երևանի ավագանու հաստատմանն են ներկայացվել առանց փոփոխությունների, ուստի Երևանի 2019 թվականի բյուջեի նախագծում աշխատավարձի ֆոնդը ներկայացվել է նախորդ տարվա չափով:</p> <p>Բ. Ավելացումը ինքնանպատակ չէ: Ներկայումս իրականացվում է աշխատակիցների աշխատանքի գնահատման համակարգի մշակման գործընթացը: Ավելացումը նաև նպատակ ունի խթանել բարձր որակավորում</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>
--	---	---	---

			ունեցող սակայն ներկա պահին ցածր վարձատրվող մասնագետների աշխատանքը, ինչպես նաև նոր, որակյալ մասնագետների ներգրավումը տեղական ինքնակառավարման ոլորտ:	
3.	Գագիկ Ավագյան (ստացված է Իրավական ակտերի միասնական հրապարակման https://www.e-draft.am կայքով 20.11.2018թ.)	Առաջարկում եմ հրապարակել կապի ծառայությունների համար նախատեսված շուրջ 400 000 դոլարին համարժեք ծախսերի բացվածքը:	Ուղերձում առկա են կապի ծառայությունների տեսակները, դրանք ներկայացվում են հայտերով և ունեն հստակ չափելիություն: Քանի որ ցանկացած ծրագրի մանրակրկիտ բացվածքը Ուղերձի ծավալը կմեծացնի բազմակի անգամ, ուստի դրանցից ցանկացածի բացվածքին կարող էք ծանոթանալ հրապարակային լսումների ժամանակ:	Նախագծում փոփոխություն չի կատարվել
4.		Նախագծից ակնհայտ է, որ հին ավանդույթները ոչ միայն շարունակվում են, այլ նաև զարգանում, ինչը հիմնավորում է արտասահմանյան գործուղումների ծախսերի կրկնակի ավելացումը: Բազմակի անգամ թե՛ մամուլով և թե՛ հասարակական կազմակերպությունների միջոցով ապացուցվել է քաղաքապետարանի պաշտոնյաների արտասահմանյան գործուղումների անարդյունավետությունը: Առաջարկում եմ նվազեցնել գործուղումների ծախսերը 100 մլն դրամով և այն նույնպես ուղղել վերելակների ձեռք բերմանը և փոխարինմանը:	Գործուղման ծախսերի ավելացումը պայմանավորված է նոր ձևավորված ավագանու և քաղաքային իշխանության ներկայացուցիչների համար մեկնակետային տարի լինելու հանգամանքով:	Նախագծում փոփոխություն չի կատարվել
5.	Գագիկ Ավագյան (ստացված է Իրավական ակտերի միասնական հրապարակման https://www.e-draft.am կայքով 20.11.2018թ.)	Հանրային քննարկումների միասնական կայքում արված առաջարկների վերաբերյալ ակնհայտ սուտ եզրակացություն ներկայացնելը նոր քաղաքային իշխանությունների պարագայում առնվազն անհասկանալի է: Նախագիծը տեղադրվել էր միասնական կայքում առանց բյուջետային ուղերձի, որի վերաբերյալ ինձ մոտ առկա է կայքի	Ուղերձի մասով նշենք, որ տեխնիկական վրիպակը և դրա շտկումը չեն խաթարել քննարկման էությունը: Ինչ վերաբերում է հղում արած որոշմամբ սահմանած կարգին, ապա այն իր մեջ չի պարունակում նման դեպքում հանրային քննարկումը կրկին անգամ անկացնելու	Նախագծում փոփոխություն չի կատարվել

	<p>draft.am կայքով 26.11.2018թ.)</p>	<p>արտատպումը և անհրաժեշտության դեպքում կտրամադրվի հանրային լսումների օրը, սակայն կրկին անգամ հիմք ընդունելով գործող օրենսդրությունը՝ պնդում եմ</p> <p>1. Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի համաձայն առանց համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձի բյուջեյի մասին ավագանու որոշումը չի համարվում բյուջեյի նախագիծ:</p> <p>2. Թերի կամ ոչ լիարժեք ներկայացրած նախագիծը ներկայացրած հանրային քննարկման չի կարող համարվել հանրային քննարկում անցած հետևաբար, եթե նպատակը նախագիծը հանրային կարծիքից խուսափելը չէ, ապա այն օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է նորից դրվի հանրային քննարկման:</p> <p>Հաշվի առնելով ՀՀ Կառավարության 2018թ. հոկտեմբերի 10-ի թիվ 1146-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետը (նույն կարգավորումները գործել են նախորդ կարգի ժամանակ) գտնում ենք, որ տեղի է ունեցել հանրային քննարկումների իրականացման խախտումներ, որի հետ կապված ակնկալում ենք պարզաբանում, որի պատճեն անհրաժեշտ է ուղարկել ՀՀ Արդարադատության Նախարարություն:</p>	<p>դրույթ: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Երևան քաղաքի բյուջեի նախագիծը իրավական ակտերի միասնական կայքով հրապարակվում է Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ և այն պարտադիր պայման չէ, հետևապես վրիպակի շտկման մասով ՀՀ Արդարադատության նախարարություն պարզաբանում տրամադրելու անհրաժեշտություն չկա:</p>	
6.		<p>Աշխատավարձի ֆոնդի վերաբերյալ ներկայացրած պարզաբանումները ընդունելի չեն, քանի որ եթե ակնհայտ կա հաստիքացուցակի օպտիմալացման կամք և ցանկություն, ապա կարելի է դա հաշվարկել և հստակ հաշվարկներով նախատեսել ֆոնդ և ոչ թե ուռճացված հաստիկացուցակով և այդ գումարներ ուղղել հանրային կարևոր խնդիրների լուծմանը, ինչ վերաբերում է պարզևատրման ֆոնդի վերաբերյալ ներկայացրած պարզաբանմանը, ապա այն որևէ կապ</p>	<p>Հաստիքացուցակի օպտիմալացման կամք առկա է, այն իրականացվելու է դեկտեմբեր-հունվար ամիսներին, որը միտված է լինելու Երևանի քաղաքապետարանի աշխատանքների արդյունավետ իրականացմանը և հետևաբար հանրային բարքի ստեղծման նպաստմանը:</p> <p>Պարզևատրման ֆոնդի բաշխման</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

		<p>չունի ներկայացված առաջարկության հետ, քանի որ էական չէ թե մեր վճարված հարկերից լրացուցիչ 2.5 մլն. ԱՄՆ դոլարը գնահատման որ համակարգով է գնալու քաղաքապետարանի աշխատակիցների հաշիվներին և ոչ թե հանրային բարիքի ստեղծմանը: Այն էական չէ նաև վերելակների վթարներից գոհվող ընտանիքների համար:</p> <p>Հաշվի առնելով, որ այս ծավալի պարզևատրման ֆոնդ նախատեսված չէ նունիսկ որևէ պետական մարմնում, ինպես նաև չի ներկայացվել որևէ էական պատճառ առաջարկը չընդունելու համար, կրկին անգամ պնդում եմ առաջարկը, որի մասին կրթարձրաձայնեմ հանրային լուսնների ժամանակ:</p>	<p>մեխանիզմները փոխվելու են և այն նպաստելու է աշխատակիցների կողմից իրականացվող աշխատանքների մոտիվացիայի խթանմանը և իրական գնահատմանը: Պատրաստակամ ենք հանրային լուսնների ժամանակ լսելու առաջարկի հիմնավոր փաստարկները և պաշտպանելու մեր տեսակետը:</p>	
7.		<p>Գործուղման ծախսերի չավելացման վերաբերյալ ներկայացրած առաջարկի եզրակացությունը որևէ իրավական տրամաբանություն չունի, եթե օրենսդրությամբ մեկնարկային տարվա համար առկա են գործուղումների և այլ անարդյունավետ ծախսերի համար լրացուցիչ հնարավորություններ սահմանված, խնդրում եմ նշել դրանք, եթե ոչ նախագծում կատարել առաջարկված փոփոխությունը:</p>	<p>Գործուղումները հիմնականում իրականացվում են Երևանի քաղաքապետարանի արտաքին հարաբերությունների ամրապնդման համատեքստում և նպաստում են շուրջ հինգ տասնյակ գործընկեր և քույր քաղաքների հետ փոխաշահավետ կապերի և ընդլայնմանը համագործակցությանը:</p>	Նախագծում փոփոխություն չի կատարվել
8.		<p>Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների համար նախատեսված գումարները աճել են 17 անգամ կամ շուրջ 330.000 դոլարով: Քաղաքում առկա բազմակի խնդիրների պարագայում սա ոչ այլ ինչ է քան ճոխություն:</p> <p>Առաջարկում եմ հրապարակել այս ծառայությունների հասցեականությունը և ակնկալվող արդյունքը:</p>	<p>Աշխատակազմի մասնագիտական զարգացումը կարևորագույն խնդիրներից է, առանց որի դժվար է պատկերացնել քաղաքի զարգացումն ու առաջընթացը:</p>	Նախագծում փոփոխություն չի կատարվել
9.		<p>Առաջարկում եմ հիմնավորել ընդհանուր բնույթի այլ ծառայությունների համար նախատեսված 49,133.8</p>	<p>Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների որոշիչ մասը Երևանի</p>	Նախագծում փոփոխություն չի

		<p>հազ. դրամի անհրաժեշտությունը, ինչպես նաև նշել այն խնդիրներն ու նպատակները, որոնց լուծմանն ուղղված են այդ հատկացումները (բյուջետային համակարգի մասին օրենք հոդված 31)</p>	<p>քաղաքապետարանի վարչական երկու շենքերի հասարակական կարգի պահպանման ծառայության մատուցման ծախսն է: Մնացած ծախսերի անհարժեշտությունը կարող է դառնալ քննարկման առարկա:</p>	<p>կատարվել</p>
10.		<p>Առաջարկում եմ հրապարակել ծառայողական ավտոմեքենաների և այն պաշտոնատար անձանց ցանկը , ում 2019թ. պետք է հատկացվի ծառայողական ավտոմեքենա: Առաջարկում է ծառայողական ավտոմեքենաների համար նախատեսված գումարները կրկնակի նվազեցնել հակառակ պարագայում նույն չափով գումարների նախատեսումը հակասում է ՀՀ Կառավարության որդեգրած քաղաքականությանը:</p>	<p>Համամիտ լինելով առաջարկին, տեղեկացնում ենք, որ ծառայողական ավտոմեքենաների քանակը փոխկապակցված է ոչ թե անձանց այլ հաստիքների հետ և հետևապես հաստիքացուցակի փոփոխությունը բերելու է մեքենաների թվի փոփոխության և կրճատման: Միաժամանակ, փոխադարձ կապի արդյունավետության տեսանկյունից ելնելով այս և մնացյալ հրապարակման առաջարկների մասով, առաջարկվում է ցանկերի կամ ծրագրերի բացվածքի համար դիմել գրավոր:</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>
11.		<p>Առաջարկում եմ հրապարակել այլ ծախսեր հոդվածով նախատեսված 52,880.0 հազ. դրամի բացվածքը, իրավական հիմքը, ինչպես նաև այն խնդիրներն ու նպատակները, որոնց ուղղված են այդ գումարները:</p>	<p>Յուրաքանչյուր տարվա բյուջե, իր մեջ ներառում է քաղաքային տնտեսությունում առաջացող ֆորս մաժորային իրավիճակների և անհապաղ արձագանքման համար անհրաժեշտ նվազագույն ծախսերի սահմանման սկզբունք, ինչը բացառություն չէ նաև 2019 թվականի բյուջեի նախագծում:</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>
12.		<p>Առաջարկում եմ հրապարակել ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում ծրագրով նախատեսված գումարների հասցեականությունը. Այն տարածքները, որտեղ նախատեսվում է անց կացնել նոր ոռոգման ցանց:</p>	<p>Հանրային կանաչ տարածքների ոռոգման ցանցի կառուցման և վերանորոգման պարագայում, առկա են վարչական շրջանների կողմից ներկայացված նախագծեր և հայտեր, սակայն դրանց վերջնական հասցեականությունը որոշվում է առաջնահերթության</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

			անհրաժեշտ հիմնավորումների և ձևակերպող հետո ուսումնասիրման արդյունքում: Միաժամանակ, հստակեցված է, որ առաջնային է համարվում Նորք-Մարաշ վարչական շրջանում Արմենակյան փողոցում ռոռոգման ցանցի հատվածի կապիտալ վերանորոգման խնդիրը:	
13.		Առաջարկում են նվազեցնել ասֆալտապատման համար նախատեսված գումարները, ինչպես նաև հրապարակել այն փողոցների ցանկը, որտեղ նախատեսվում է ասֆալտապատում 2019թ. ընթացքում:	Ասֆալտապատման աշխատանքների համար նույնպես առկա են վարչական շրջանների կողմից ներկայացված վերանորոգվող փողոցների ցանկեր, սակայն դրանց վերջնական ցուցակները կճշտվեն՝ գարնանային ձևակերպող հետո առաջնահերթության քննարկումների արդյունքում:	Նախագծում փոփոխություն չի կատարվել
14.		Սկզբունքորեն անընդունելի է ավտոկայանատեղի կազմապերպման ծառայությունների համար ծախսերի 250 մլն դրամով ավելացումը, այն պարագայում երբ այդ ծախսերը պետք է գրոյացվեին կամ առնվազն նվազեցվեին: Առաջարկում են նվազեցնել այդ ծախսերը 300 մլն դրամի չափով և այն ուղղել վերելակների փոխարինմանը, ինչ կապահովի 25 շենքի համար նոր վերելակներ: Միաժամանակ առաջարկում է հրապարակել ավտոկայանատեղի ծառայության գնագոյացման մեխանիզմները:	Ավտոկայանատեղի կազմապերպման ծառայության բարեփոխումը առաջնային անհրաժեշտ գործընթաց է և այդ առումով ծախսերի ավելացումը համարժեք է եկամուտների ավելացմանը: Միաժամանակ, պետք է հաշվի առնել, որ ծառայությունը սահմանված է օրենքով, իսկ տեղական վճարի դրույքաչափերը սահմանում է Երևանի ավագանին:	Նախագծում փոփոխություն չի կատարվել
15.		Առաջարկվում է հրապարակել թեքահարթակների կառուցման ծրագրով՝ նախատեսվող թեքահարթակների հասցեները՝ հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը համաձայն որի շինարարական աշխատանքների գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծահին փաստաթղթերի հիման վրա:	Երևան քաղաքում թեքահարթակների կառուցման հասցեական պահանջարկն էականորեն ավելին է, քան նախատեսվում է տարեկան բյուջեի նախագծով: Դրանց առաջնահերթության սկզբունքից ելնելով էլ իրականացվում են տարեկան կտրվածքով նախատեսվող աշխատանքները, ընդ որում սկզբունքորեն նախ և առաջ հաշվի են	Նախագծում փոփոխություն չի կատարվել

		Մեջբերումը վերաբերվում է նախագծով նախատեսված բոլոր շինարարական աշխատանքներին:	առնվում հաշմանդամության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկները:	
16.		Խիստ անհասկանալի է Երևան քաղաքի կանոնադրյալ խնդիրներից մեկը հանդիսացող և բնակչության անվտանգության հետ ուղղիղ առնչվող խնդրի՝ վերելակների հիմնանորոգման համար գումարների շուրջ երեք անգամ նվազեցումը: Առաջարկվում է այս ծրագրի գծով նախատեսված գումարը փոխարինել ծառայողական ավտոմեքենաների համար նախատեսված գումարի հետ:	Կրկին անգամ տեղեկացնում ենք, որ ներկայումս ուսումնասիրվում է վերելակային տնտեսության բարեփոխման ծրագիրը, որը էականորեն կնվազեցնի դրանց վրա կատարվող ծախսումները: Այս հանգամանքից ելնելով է, որ 2019 թվականին Երևանի բյուջեով նախատեսվում է ընդամենն իրականացնել ներկայիս վերելակային տնտեսության խիստ անհրաժեշտ և առաջնահերթ ընթացիկ վերանորոգման աշխատանքները:	Նախագծում փոփոխություն չի կատարվել
17.		Առաջարկվում է օրենսդրությամբ քաղաքապետարանի լիազորությունների դաշտում հիմնավորել զբոսաշրջության զարգացում ծրագրով նախատեսված 138 մլն դրամի անհրաժեշտությունը, ինչպես նաև այն խնդիրներն ու նպատակները, որոնց լուծմանը ուղղված են դրանք:	Երևան քաղաքում զբոսաշրջության զարգացմանը միտված ծախսերը նախատեսված են նպաստելու զբոսաշրջային երկրի մայրաքաղաք հանդիսացող Երևանի գրավչության ավելացմանը, ներդրումային ծրագրերի իրականացման օժանդակմանն ու աջակցմանը, զբոսաշրջիկների համար տեղեկատվական առավել բարենպաստ միջավայրի կայացմանը:	Նախագծում փոփոխություն չի կատարվել
18.		Առաջարկվում է հրապարակել աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպություններին ծրագրով, որպես նվիրատվություն նախատեսված 570 մլն դրամ ստացող կազմակերպությունների ցանկը ըստ գումարների և յուրաքանչյուր կազմակերպությանը հատկացվող գումարին վերաբերող ծրագրի նկարագրությունը: Միաժամանակ հիմնավորել այդ	Մոցիալական, կրթական և մշակութային քաղաքականությունը սկզբունքորեն լինելու է 2019 թվականի համար գերակա, ինչը ենթադրում է այդ ոլորտների աշխուժացմանը նպաստող ֆինանսական ներարկումներ, աջակցությունների և օժանդակությունների տեսքով, որոնք իրականացվելու են հաշվի առնելով	Նախագծում փոփոխություն չի կատարվել

		գումարների կրկնակի 2.5 անգամ ավելացման անհրաժեշտությունը և դրա առաջնահերթությունը վերելակների ծրագրի նկատմամբ: Ընդհանուր առմամբ ընդունելի չէ որպես նվիրատվություն տարբեր կազմակերպությունների հատկացնել 570 մլն դրամ, իսկ Երևան քաղաքի վերելակների համար նախատեսել 30 մլն դրամ:	ներկայացվող ծրագրերի իրագործելիության և արդյունավետության կարևոր գործոնը:	
19.		Առաջարկվում է հրապարակել այն ներդրումային ծրագրերի ցանկը, որոնք նախատեսվում է իրականացնել նախագծով նախատեսված 149 մլն դրամի սահմաններում:	Ներդրումային ծրագրերի իրականացում ծրագրով 19,000.0 հազ. դրամը նախատեսվում է ներդրումային ծրագրերի վերաբերյալ տարատեսակ տեղեկատվական բրոշյուրների, կատալոգների և ներդրումային տեղեկատվական գրքուկների տպագրության համար, որը նպատակ ունի իրազեկելու հնարավոր ներդրողներին, ինչպես նաև հասարակության լայն շերտերին մայրաքաղաքում հնարավոր ներդրումներ իրականացնելու համար, իսկ 130,000.0 հազ. դրամը նախատեսվում է որպես սուբսիդիա հատկացնել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ին:	Նախագծում փոփոխություն չի կատարվել
20.		Անհրաժեշտ է ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (հասցեականությունը), որոնց նախատեսվում է հատկացնել սուբսիդիաներ թափառող կենդանիներին վնասազերծելու համար:	Ներկայումս դեռևս որոշված է սկզբունքը, որով իրականացվելու է ծառայությունը, իսկ կազմակերպության կամ կազմակերպությունների խնդիրը քննարկման փուլում է:	Նախագծում փոփոխություն չի կատարվել
21.		Առաջարկվում է ներկայացնել այն բազմաբնակարան շենքերի ցանկը, որոնց համար բյուջեյով նախատեսված են տանիքների նորոգում և այլ	Առաջարկում ենք բազմաբնակարան շենքերի ցանկերին ծանոթանալու համար դիմել գրավոր:	Նախագծում փոփոխություն չի կատարվել

		բարեկարգման աշխատանքներ:		
22.		Առաջարկում են հրապարակել աջակցություն առողջապահության կազմակերպությունների ծրագրով նախատեսված գումարների (170 մլն.) իրավական հիմքը, քանակական բնութագիրը և այն խնդիրներն ու նպատակները, որոնց լուծմանն են ուղղվելու դրանք:	Առաջարկը մասամբ ընդունվել է և հանրային լուսմներից հետո այս ծրագրով նախատեսված ծախսերը կրճատվելու են 100 մլն դրամով, իսկ մնացած գումարը նախատեսվում է համայնքային ենթակայության առողջապահական կազմակերպություններին աջակցություն տրամադրելու համար:	Նախագծում նշված ծրագրով կատարվել նվազեցում է 100մլն. դրամի չափով:
23.		Առաջարկվում է նվազեցնել մշակութային միջոցառումների համար նախատեսված 614,755.7 հազ. դրամ գումարը կիսով չափ, իսկ մնացած մասով հրապարակել յուրաքանչյուր միջոցառման համար նախատեսվող գումարը և նկարագիրը, իսկ գումարի մյուս մասը ուղղել վերելակների ձեռք բերման և փոխարինմանը:	Մշակութային միջոցառումները 2018 թվականի համեմատ արդեն իսկ նվազեցվել են 443,000.0 հազ. դրամով: Միաժամանակ մայրաքաղաքի, նեոբրյալ վարչական շրջանների մշակութային կյանքի աշխուժացմանը ուղղված միջոցառումները ինքնանպատակ չեն, դրանք մայրաքաղաքի ոգու մասնիկն են և իրենց բազմազանությամբ ու իրականացման ոճով, դրական են ընդունվում բնակչության ինչպես նաև մայրաքաղաք ժամանող հյուրերի կողմից:	Նախագծում փոփոխություն չի կատարվել
24.		Առաջարկվում է հրապարակել այն սկզբունքները և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, որի պարագայում բնակիչը հնարավորություն կունենա օգտվելու բյուջեի նախագծով նախատեսված սոցիալական աջակցության ծրագրերից:	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության և վարչական շրջանների սոցիալական բաժինների գործառույթներից է մայրաքաղաքի սոցիալապես խոցելի խավերի բացահայտումը և դրանց նվազագույն պահանջումների մասին տեղեկատվության հստակեցումը: Աջակցության ծրագրերի հիմնական շահառուները դիտարկվում են նրանք, ովքեր տվյալ ժամանակահատվածում ունեն այդ աջակցության խիստ կարիքը և որի մասին՝ կոնկրետ իրավիճակի	Նախագծում փոփոխություն չի կատարվել

			փաստաթղթային հիմնավորմամբ, գրավոր իրազեկվում է համապատասխան ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարների կողմից:	
25.		Ինչպես նշել եմ նախորդ առաջարկություններում օրենսդրությամբ սահմանված կարգերի խախտմամբ տեղադրված բյուջետային ուղերձի առաջին մասի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ նախագիծը չի ապահովում առաջին և երրորդ կետերի գերակայությունները մասնավորապես՝ բնակչությանը լիարժեք հաշվետու լինելու և քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի առումով, հետևաբար, կամ պետք է ուղերձից հանվեն առաջին և երրորդ կետերը, կամ պետք է ապահովել նախագծի լիարժեք հանրային քննարկման հնարավորություններ:	Երևանի քաղաքապետարանը ֆինանսական հաշվետվողականության առումով թափանցիկ և հրապարակային գործընթաց է իրականացնում: Մասնավորապես Երևանի քաղաքապետարանի կայքում ապահովված է ֆինանսական ոլորտի փաստաթղթային սպառիչ տեղեկատվության տեղադրումը, ֆինանսական հաշվետվությունները, ենթակա կազմակերպությունների նախահաշիվները, ամենօրյա թարմացման ռեժիմով գործում է ինտերակտիվ բյուջեն: Ներկայումս տեղադրված են նաև 2019 թվականի բյուջեի նախագիծը և Երևանի քաղաքապետի Ուղերձը և ըստ էության այս գործիքակազմը ապահովում է ֆինանսական գործընթացներում և կարևոր ֆինանսական փաստաթղթերի քննարկման ժամանակ քաղաքացիների արդյունավետ ներգրավման հնարավորությունը: Այս առումով, Երևանի քաղաքապետարանը ձևավորել և շարունակում է կատարելագործել բնակչությանը լիարժեք հաշվետու լինելու, բնակչության հետ փոխադարձ արդյունավետ կապի և քաղաքի մասնակցային կառավարման մշակույթը:	Նախագծում փոփոխություն չի կատարվել
26.	Մովսես	Երևան քաղաքի պետական բյուջեն կազմված չէ	Դեռևս ավարտված չէ պետական բյուջեի	Նախագծում

	<p>Արխատակեայան (19.11.2018թ. հ.18/84695 դիմում)</p>	<p>ծրագրային բյուջետավորման մեթոդաբանությամբ:</p>	<p>ծրագրի բյուջետավորման ամբողջական կայացումը: Ծրագրային բյուջետավորման սկզբունքները ամբողջությամբ ներդնելու ուղղությամբ տարվում են ինտենսիվ աշխատանքներ: Շտապողական կլինի, եթե պետական բյուջեի այդ գործընթացները դեռ չավարտած՝ զուգահեռ սկսենք համայնքային բյուջեի ծրագրային բյուջետավորումը:</p>	<p>փոփոխություն չի կատարվել</p>
<p>27.</p>		<p>Երևան քաղաքի պետական բյուջեի դեֆիցիտը 2019թ.՝ 2018թ. համեմատությամբ ավելանալու է 26 անգամ, մինչդեռ եկամուտներն ավելանալու են 2,3 տոկոսով, իսկ ծախսերը՝ 5,4 տոկոսով: Ինչ հիմնավորումներով է դա կատարվելու:</p>	<p>Հատված 5-ում հստակ նշված են դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, խոշոր թիվը հետևանք է նախատեսվող վարկի ստացումից, որն ուղղված է լինելու մանկապարտեզների էներգախնայողությանը, վերանորոգմանը և հիմնանորոգմանը:</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>
<p>28.</p>		<p>Որքան է Երևանի բյուջեի պարտավորությունները «Փարքինգ սերվիս» ՍՊԸ-ին վարկային պարտավորությունների համար:</p>	<p>Վարկը մարելու համար տարիներ կպահանջվեն: Այդ է պատճառը, որ այս պահին չափազանց դժվար է կայանատեղերի համակարգի շահագործումը դադարեցնելը, որովհետև եթե վաղը որոշենք, որ այստեղ իրավական ձևակերպումների և եզրույթների սխալ մեկնաբանության խնդիր կա եկեք այս համակարգը չշահագործենք, ապա դուք, ես և մյուսներս շարունակելու ենք փակել վարկը, առանց դրա դիմաց որևէ լուծա ստանալու: Պարոն Առաքելյանն ունի քաղաքապետի հանձնարարական որպեսզի օրենսդրական նախաձեռնությամբ Ազգային Ժողովի առաջին իսկ նստաշրջանում ներկայացնի համապատասխան</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

			<p>օրինագծերը:</p> <p style="text-align: right;">Հ. Մարգարյան <i>(Երևանի քաղաքապետի տեղակալ)</i></p> <p>Կա 2 օրենք՝ տեղական տուրքերի և տրանսպորտաին միջոցների քանակների մասին օրենքները, որոնք ներկայումս գործում են և դրանցով սահմանված է տեղական վճար, որը ենթակա է գանձման համայնքի բյուջեին: Հիմնական փոփոխությունները կայանում են նրանում, որ այդ դատական պրակտիկայի և իրավակիրառական այլ պրակտիկայի ամփոփման արդյունքում մենք կարողանաք այնպիսի օրենսդրական փոփոխություններ առաջարկել, որպեսզի որևէ ձևով տարաբնույթ մեկնաբանություններ չլինեն և այդ տեղական վճարի գանձման ընթացքում որևէ մեկի իրավունքը չխախտվի և այդ ամբողջ գործընթացը լինի շատ որոշակի: Այս անգամ նույնպես կխնդրեմ, որ այս գործընթացին ունենաք Ձեր ակտիվ մասնակցությունը, որովհետև Ձեր փորձը մեզ շատ կօգնի: Պատրաստվում ենք ոչ թե համակարգը հանել, այլ բարեփոխել այնպես, որ իրավունքների խախտումներ չլինեն:</p> <p style="text-align: right;">Ջ. Առաքելյան <i>(Իրավաբանական վարչության պետ)</i></p>	
29.		<p>Առաջարկում եմ անկախ աուդիտ իրականացնել «Փարքինգ սիթի սերվիս» ՍՊԸ ընկերության վերաբերյալ և պատրաստել հանցագործության</p>	<p>Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվում է 500-ից ավելի կազմակերպություններ, դրանց կեսից ավելին ունեն աուդիտի կարիք:</p>	<p>Նախագծում փոփոխություն չի կատարվել</p>

		մասին հաղորդում դատախազությանը:	«Փարքինգ սիթի սերվիս» ՍՊԸ-ն դեռևս ամենագերակա անհետաձգելի աուդիտ պահանջող կազմակերպություններից չէ: Հաշվի առնելով այն, որ սա դեռևս մեզ եկամտաբերություն ապահովող ընկերություն է իսկ մնացածը վնասաբերություն:	
30.		Երևանի բյուջեում որքան են կազմելու իրապես վճարովի կայանատեղիներ կառուցելու ուղղությամբ ծախսերը և որտեղ է նախատեսվում դրանք կառուցել:	Շահումյան հրապարակը կա տեսլականում, տեսլականում կար նաև Սախառովի հրապարակը, բայց դրա ընդերքում ստերգետյա խնդիրեր կան, անցուղիներ կան որոնց վնասելը ճարտարապետական լուրջ նորմերի խախտումներ կարող է առաջացնել: Հ. Մարգարյան (Երևանի քաղաքապետի տեղակալ) Շահումյան հրապարակի հետ կապված նյութը գրեթե պատրաստ է, այդ թվում նաև նախագծի տեսքով: Այժմ մենք գտնվում ենք կոնկրետ ներդրողներ ներգրավելու փուլում: Նաև ծրագիր կա Երևանի քաղաքապետարանի դիմացի հատվածի հետ կապված: Զ. Առաքելյան (Երավարանական վարչության պետ)	Նախագծում փոփոխություն չի կատարվել
31.		Երևան քաղաքի բյուջեում նախատեսված են արդյոք ծախսեր քաղաքի տարածքում հեղեղատարների մաքրման, վերանորոգման և կապիտալ շինարարության համար: Եթե ոչ, ապա ով է պատասխանատու դրանց, հատկապես դրանց համակարգերի աշխատանքի համար (այդպիսի խնդիրներ կան հատկապես Երևան քաղաքի հարավ-	Մեր օրակարգից երբեք դուրս չի ելել այդ հարցի հսկողությունը, բայց Ձեր նշած հասցների վերաբերյալ խնդիրը կլուծվի, եթե դա առկա է:	Նախագծում փոփոխություն չի կատարվել

		արևմտյան Բ-2 թաղամասի 89-99 շենքերի բակում, ՀԱ Բ-2 թաղամասի 148 շենքի դիմաց):		
32.		Ինչ ծրագիր կա Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնախնդրի լուծման ուղղությամբ:	Կա ծրագիր, բայց ոչ թե վերելակների կառուցման այլ վերելակների փոխարինման ուղղությամբ: Երևանում կա 4580 վերելակ որից 4230-ը ենթակա է փոխարինման, որոնցից էլ 3300-ը ենթակա է արագ փոխարինման, քանի որ դրանք արդեն վտանգավոր են շահագործման համար:	Նախագծում փոփոխություն չի կատարվել
33.		Ինչ միջոցներ են նախատեսվում ձեռնարկել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի չմշակված հատվածի տարածքի գոտիավորման նախագծերի իրականացման, տասնամյակներ առաջ սեփականաշնորհված, սակայն առայժմ սեփականության վկայական չունեցող անձանց արդարացի խնդիրները օրենքի շրջանակներում լուծելու, այդ բանգավառում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարելու ուղղությամբ:	Ծրագրերում այդպիսի դրույթներ նախատեսված չեն:	Նախագծում փոփոխություն չի կատարվել